ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍԵՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արաբկիրի 51-րդ փողոցն անվանակոչել դանիացի միսիոներ Մարիա Յակոբսենի անվամբ՝ «Մարիա Յակոբսեն փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍԵՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դանիացի միսիոներ Մարիա Յակոբսենին հազարավոր երեխաներ ճանաչում ու կանչում էին «մամա»:
Մարիային հիշում են ոչ միայն որպես մեծանուն և անձնվեր մարդասիրական գործիչ կամ արքեպիսկոպոս Տեր Հուսիկ Սանթուրյանի («Թռչնոց բույն» որբանոցի գաղթական ու ծնողազուրկ հայ երեխաներից) դաստիարակ: 1907-1919 թվականներին Մարիայի գրած 600 էջանոց օրագիրը, որի էջերը լի էին բազմաթիվ ահասարսուռ լուսանկարներով, հսկայական դեր կատարեց Հայոց կենաց-մահու տարիների մասին ճշմարտությունն աշխարհին ներկայացնելու գործում:

1882 թ. ծնված Մարիա Յակոբսենը Օսմանյան կայսրության տարածքում 1890-ականներին իրագործված համիդյան ջարդերի մասին տեղեկանում է պատանի տարիքում, ինչից հետո բուժքույրության դասընթացներ ավարտելով՝ համալրում «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպության շարքերը և ուղևորվում Թուրքիա: Նա առաջինն էր գթության քույրերից, ով հասավ Խարբերդ. դա համընկավ իր 24-ամյակի հետ: Դեռ նոր էր անցել գործի, երբ տեղի բժիշկները նրան արդեն անվանում էին «փրկության հրեշտակ»: Թեպետ նրա համար ծանր էր բարձրադիր վայրերում աշխատելն ու երկար ճանապարհ կտրելը, դա ոչինչ էր 1915-ին սկսվածի համեմատ: Ցեղասպանության ալիքը հազարավոր երեխաների բերեց նրա մոտ:
Երեխաներին փրկելու համար Մարիան սկզբում որդեգրեց երեքին, իսկ շուտով նրա խնամքի տակ էին 3600-ը:Նա միանձնյա ստանձնեց հիվանդանոցում տեղավորված հազարավոր որբերի խնամքը, երբ պատերազմին Միացյալ Նահանգների ներգարվման հետևանքով ամերիկյան անձնակազմն ստիպված եղավ լքել կայսրության տարածքը: Ինչ-որ մի պահի Յակոբսենը կերակուր էր տալիս օրական 4500 երեխայի: Չափազանց դժվար է կարդալ այդ օրերի մասին նրա հուշերը. «Ես կարծում էի՝ այլևս երբեք չեմ ժպտա»,- գրում է Մարիան՝ պատմելով տեղի պակասի պատճառով մի տղայի մերժելու մասին, որին հետո գտան սովից մեռած: «Սիրտս կտոր-կտոր էր եղել»,- պատմում է նա՝ նկարագրելով մի դեպք, երբ ոստիկանները, որոնք նաև մասնակցում էին հայերի հետապնդումներին, իր դուռն են բերում պատառոտված ոտքերով ու մերկ մի փոքրիկ աղջնակի:

Մարիան կյանքի գնով հաջողացնում է իր օրագիրը դուրս բերել երկրից, երբ իր խնամքին գտնվող երեխաներից մեկից տիֆով վարակված՝ 1919-ին ստիպված է լինում վերադառնալ Դանիա: Ապաքինվելուց կարճ ժամանակ անց նա հրավիրվում է Միացյալ Նահանգներ և յոթ ամիս շարունակ ելույթներ ունենում իր խնամքի տակ գտնվողների ծանրագույն կացության մասին՝ միջոցներ հայթայթելով նրանց համար:
Տեղեկանալով, որ Մերձավոր Արևելքի Նավամատույցը ձեռնարկել է 110,000 երեխաների Թուրքիայից տարհանելու գործը՝ Մարիան, վտանգը մի կողմ թողած, շտապ վերադառնում է Մերձավոր Արևելք և սկսում զբաղվել որբահավաքությամբ: Թուրքիա մուտքի արտոնագիր չստանալով՝ նա ուղևորվում է Լիբանան և շուտով հիմնում հետագայում մոտ 200 հայ երեխա պատսպարած «Թռչնոց բույն» որբանոցը. Մարիայից մշտապես քաղցրավենիք խնդրող երեխաները նրան հիշեցնում են ձվից նոր դուրս եկած քաղցած թռչնակների:

Այցելուները պատմում են, որ «Թռչնոց բույնն» ավելի շատ դպրոց էր, քան որբանոց, անթերի մաքուր էր ու կարգապահ, երեխաները դաս էին սովորում, իսկ աղջիկները՝ նաև հմտանում ասեղնագործության նրբություններում: Զարմանալի է, բայց հաստատությունը գործել է նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: 1950 թ. Յակոբսենը դարձավ առաջին կինը, ով մարդասիրական աշխատանքի համար պարգևատրվեց Դանիայի թագավորության ոսկե մեդալով:
Մարիան վերջին անգամ հայրենիք է այցելել 1957 թ., իսկ մահացել է 1960 թ., «Թռչնոց բույն» որբանոցում: Իր ցանկությամբ՝ աճյունն ամփոփվել է որբանոցի բակում:

Մարիա Յակոբսենի անվամբ փողոց անվանակոչելու միջնորդությամբ տարբեր ժամանակահատվածներում Երևանի քաղաքապետարան են դիմել նաև «Մարիա Յակոբսեն կենտրոն»ՄՀԿ-ի նախագահ Արմեն Մանասյանը և «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրինությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍԵՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Մարիա Յակոբսենի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍԵՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Մարիա Յակոբսենի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**